*1352. Բ-ի վրա.*

Շնորհիւ Աստուծոյ ես Այտին Պօղոսան, Դաւլաթ բէկս, Աստուածապաս ծառայս Աստուծոյ կանգնեցաւ սուրբ խաչս բարեխաւս ծնողաց մերոց Թամային եւ Փարին, Այտանին, Մանասերին. թվին :ՌՃԲ: (1653):

*Հրատ. Սմբատյանց, 620։ Լալայան, XIX, 26։*

*1353. Գ-ի վրա.*

Յանուն աստուծոյ ես Աղախանն, ես Սալմոսն, ես Պաղտասարն որդի տէր Մելիքսէթին՝ կանգնեցուցաք սուրբ խաչս բարեխաւս տէր Մելիքսէթին, կողակցին Իբրամին, Պայլին, Դաստամին. թվ. :ՌՃԲ:(1653):

*Հրատ. Սմբատյանց, 620։ Լալայան, XIX, 27։*

*1354. Գ-ի վրա.*

Ես մեղապարտս, չարագործ Զաքարիայս, կանգնեցի զխաչերս. ով կարդէք՝ մեզ ողորմած լերուք. եւ հարանցն իւրեանց Եփրոյիմին եւ Խալարինին:

*Հրատ. Սմբատյանց, 622։ Լալայան, XIX, 27։*

*1355. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, հենած են եղել եկեղեցու ներսում, հյուսիսային պատին, Ղուկաս վարդապետի տապանաքարի մոտ.*

*Ա-ի վրա.*

ԱԾ. ողորմի տէր Սահակին:

*Հրատ. Սմբատյանց, 626։ Լալայան, XIX, 26։*

*1356. Բ-ի վրա.*

ԱԾ. ողորմի Ամիր Սալրանին:

*Հրատ. Սմբատյանց, 626։ Լալայան, XIX, 26։*

*1357. Գ-ի վրա.*

ԱԾ. ողորմի Ոստակէսին:

*Հրատ. Սմբատյանց, 626, Լալայան, XIX, 26։*

## ՄԵԾ ՄԱԶՐԱ

*Գյուղի հին անունը անհայտ է, բայց հնագույն բնակավայր է. հատկապես նշանավոր էր XVI—XVII դարերում, երբ դարձավ Մելիք Շահնազարյանների նստոցը։ Տեղագիր հեղինակները հիշատակում են այստեղ մեծ քանակությամբ խաչքարերի գոյության մասին։ Սմբատյանցը հաշվել է 107 կանգուն խաչքար և հանձնել գյուղի ատնատերի հսկողությանը[1], բայց այժմ դրանց թիվը մեկ տասնյակից չի անցնում։ Ցավալի է, որ տեղագիր հեղինակները այդ բոլորից արտագրել են ընդամենը 11 արձանագրություն, մինչդեռ բոլոր ավերմունքներից հետո մեր հավաքածուն ունի 31։*

*Գյուղում մնացած հուշարձաններն ու արձանագրությունները խմբված են հետևյալ վայրերում.*

Ա. Հին գերեզմանատուն, *գտնվում է գյուղի հյուսիս-արևելյան եզրին. շատ ընդարձակ է, բայց ավերված. բարեբախտաբար մնացել է իր տեղում և կանգուն է 881 թ. նշանավոր խաչքարը։ Հնում սրա վրա շինված է եղել մատուռ, որ այժմ լրիվ քանդված է։ Այս գերեզմանատանը մնացել են քիչ քանակությամբ և աննշան գերեզմանական հուշարձաններ։*

Բ. Ավերակ եկեղեցի և շրջապատը. *գտնվում է գյուղի հարավային եզրին, գետակի ափի բարձրության վրա, եղել է մեծ, թաղածածկ շենք՝ շինված անտաշ քարերով. մնում են մոտ*

*[1] «Գեղարքունիք», էջ 609։*

երկու մետր բարձրությամբ պատերը միայն, իսկ աջևում նույն ախլի մի գավթի ավելի վատ պահպանված ավերակները։ Պատերի մեջ ագուցված են գերեզմանական հուշարձաններ, նույնպես Մելիք Շահնազարյանների տոհմին վերաբերող, որով հայտնի է դառնում, որ մոտ անցյալներում ևս նորոգումներ են կատարվել, դրանցից ամենահինն ունի 1539 թվականը։

Գ. Մելիք Շահնազարյանների գերեզմանոց. գտնվում է գյուղի կենտրոնում. հնում եղել է ընդարձակ. այժմ նրա տեղում շինված է երկհարկանի դպրոց, որի հետևանքով հուշարձանների մեծ մասը ոչնչացվել է. տեղում մնացել են մի քանի խաչքարեր և տապանաքարեր, բոլորն էլ մեծարժեք և Մելիք Շահնազարյանների տոհմագրության ճշտման համար կարևոր արձանագրություններով։

Դ. Գյուղամիջում ցրված հուշարձաններ. երկու մեծ գերեզմանատներից ամբողջ կամ կոտրատելով, բնակիչները մեծ քանակությամբ գերեզմանական հուշարձաններ տարել և օգտագործել են իրենց տների ու բակերի պատերի մեջ, որպես շինանյութ։ Դրանցից մի քանիսի վրա կան նաև արձանագրություններ՝ լրիվ կամ մասերով։

Ե. Կորած հուշարձաններ. Նախորդ հրատարակիչների մոտ կա 11 արձանագրություն, որոնց հուշարձաններն այժմ գոյություն չունեն։

Ներկա ժողովածուում այս գյուղից ամփոփված են 31 արձանագրություն, որոնցից 11-ը հրատարակված են եղել նախկինում։

## ՀԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1358. ԽԱՉՔԱՐ,** մեծ (երկար. 2,30, լայն. 1,60 մետր), բազալտե չեչոտ քարից, կամար զարդով, արևմտյան երեսին միայն խաչ, առանց շրջանակների ու զարդերի, վերևից կախված են երկու ողկույզ խաղող, իսկ ներքևից բարձրանում են տերևներ, կանգնած է գյուղի արևելյան մասում գտնվող հին գերեզմանատան մեջ. Թիկունքին՝



:ԾԼ: (881) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՏՐՆԵ|ՐՍԵՀԵԱՆ, ՍԻՐՆԵԱՑ ԵՒ| ԱՂՎԱՆԻՑ ԻՇԽԱՆ ԿԱՆԳ|ՆԵՑԻ Ձ[ԵՌ]ԱՄ[Բ] ՈՒՐԲ ՆՇԱՆՍ ԱՒԳ|ՆԱԿԱՆ ՀԱՒՍԱՏԱՑԵ|ԼՈՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ|ԷՔ ՍՈՒՐԲ ԽԱ[Չ]Ի|Ս| ՔՍԻ Ձ[ԻՍ] ՅԱՂԱ|ԻԹՍ ՅԻՇԵՍՑԻՔ:

Ծանոթ. Անցյալում խաչքարի վրա շինված է եղել մատուռ, այժմ չկա։

Հրատարակիչները ԱՏՐՆԵՐՍԵՀԵԱՆ տոհմանունը վերծանել են կամ ԱՄԻՐ ՆԵՐՍԵՀ կամ ուղղակի՝ ԱՄԻՐ։

Հրատ. Ջալալյանց, Բ, 111, Ալիշան, 72, Սմբատյանց, 607,
Լալայան, XIX, 21,
Լուսանկ. 288

**1359. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, երեսին քանդակված ննջեցյալ. գտնվում է գյուղի հին գերեզմանատան մեջ. նախորդ խաչքարին մոտ, երեսին 11 տող.*



ԵՍ ՄԳԴԷՄՍ Դ|ՌԵՑԻ| ԶՏ⌊Ա⌋ՊԱ|ՆՍ ՀԱՒ|Ր ԻՄՈՅ|
ԳՐԻԳՈՐ| ԱՆԱՑ. Ո|Վ ԿԱՐԴԱՑԷ ՅԻՇԵՑԷՔ:

Մանր. Համանաբար XIII դարի վերջի։

**1360. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, երկթեք, խրված գետնի մեջ, հին գերեզմանատանը. հարավային կողի վերևում 3 տող.*



ԵՍ ՈՒՄԵԿՍ ԵՒ ՀԱՅՐԱՆՈՒՆ ԿԱԶՄԵՑԱՔ| ԶՏԱՊԱՆՍ ՈՐԴՈՑ ՄԵՐՈՑ ԺՈՒԺԻՍ,
ՈՐ Ա⌈Ր|Ե⌊Ա⌋ՄԲ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ. ՈՐՔ ԿԱՐԴԷՔ ՅԱՂԱՒԹ⌊Ս ՅԻՇԵՑԷՔ⌋:

**1361. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, օրորոցաձև, շրջված գեղի ճանապարհը, հարավային և հյուսիսային երեսներին 3 տող.*



ԱՍՏՈՒԾՈՎ, ՄԵՔ ԱՂԷՔՍԻԱՆՈՍ ԷՐԷՑՍ, ՀԱՐՍ ԻՄ ԽԱՆՊԷԿԻՍ.
ԿԱՆԿ⌈ՆԵ⌉ՑԱ⌈Ք ԶԽԱԶ⌉Ս, ՀԱՆԳՈՒՑԱՔ ԶՏԱՊԱՆՍ ԵՂԲԱՒ⌈Ր ԻՄ⌉
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ. ԹՎ. :ՌԺԷ: (1568):

**1362. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, ընկած գերեզմանատան արևմտյան եզրին. քիվին և թևերի արանքում 3 տող.*



Ս̅Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄՈՍԷ⌈Ս⌉ԻՆ
⌊ԵՒ⌋ ԿՈՂԱԿՑԻՆ ԻՒՐ ԳՈՒԼՈՒՄԻՆ.
ԹՎ. :ՌԻ: (1571):

**1363. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, հարավային կողին երկու լարանի սազ նվագող և ձեռքին ըլիթ բռնած պարող մարդիկ ու գինու գավ. տառանքներում 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԶՂԱԼ
ԱՅՊԿՆՐԴԻԴԻՎԱՆ
ՊԿՆԹՌՃԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՊԱՅԱՑՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ԴԻՎԱՆԵԻՆ. ԹՎ. ՌՃԷ: (1658)

**1364. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, նախորդի մոտ, վրան սազ նվագող և պարող մարդիկ. տակը կար սկզբն՝ լիքն ուտելիքներով և գինու գավ. վերևում միայն թվականը 1 տող.*

Թ Ռ Ճ Լ Բ

ԹՎ. ՌՃԼԲ: (1683):

**1365. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, օրորոցաձև, հարավային կողին երկու կանայք բռնել են մեկը՝ ըլիթ, մյուսը՝ գավ, առաջինների դիմաց՝ լեքը կերակրով. Հյուսիսային կողի կենտրոնում խաչ և երեք շրջանակներին 5 տող.*

ՏԻՆՐԴԻՃԱԼԱ
ՍԲԽՉԱԲԸ
ԽՍԱԹՑՊԷ
ՍԱՀՈՊՆ
ՄՆԻՎԱԻԹ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱԹԱՑՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ՃԱԼԱԼԻՆ, ՈՐ .....[1] ՍԱՀՈՊՆ ՄՆԻՒԱԻ, [ԹՎ.] ՌՃԼԴ: ԷՐ (1685):

**1366. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, երկարաձև, երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍ
ՏԱՂԱՏԱՏԻՆ
ԿՈՂԱԿԻՑԴԱ
ԿԱԼԻՆ
ԹՌՃԽԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՂԱՏԱՏԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ԴԱԼԻՍԱԼԻՆ. ԹՎ. ՌՃԽԹ: (1700):

*Ծանոթ. Ննջեցյալի անունը հնարավոր է նաև ԱՂԱՄԱՏԻՆ կարդալ*

**1367. ԽԱՉՔԱՐ**, *ընկած է գերեզմանատան արևմտյան մասում, շրջանակներին 4 տող.*




ՅՈ[Ւ]ԻՍՈՎ[Ւ]Ն ԱՅ. ԵՍ ՍԻՀԱԿՍ ԿԱ[Ւ]Ն[Վ]Կ[Ւ]Ն[Յ]ԵՑԻ ԽԱՉՍ ՍՐԴՈՑ ԻՄ ՇԱՆՓԱՇԱՅԻՆ, ԸՍՏԵՓԱՆՈՍԻՆ, ՅԻՇԵՑԷՔ [Ի] ՔՍ.

*Ծանոթ. Հավանաբար XVI դարի վերջի*

1368. ԽԱՉՔԱՐ, ընկած է նախորդի մոտ, քիվին 2 տող.

ՀՈԳՈՅԻ.....
ԵՍԱՊՐՀԱՄՍԿԱԿՆԵՑԻԽՉՍ......

ԵՍ ԱՊ[Ր]ՀԱՄՍ ԿԱ[Ն]ԿՆԵՑԻ ԽԱՉՍ
ՀՈԳՈՅ ԻՄՈՅ . . . ]:

Մանր. Հավանաբար XVI դարի:

1369. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, երեսին 3 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱԹԱ
ՅԵՊԿԻՆՈՐԴԻՀԱԽՆԱԶ
ԱՐԻՆԹՌՃԾ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԹԱ[ՅԵՊ]ԷԿԻՆ, ՈՐԴԻ
ՀԱԽՆԱԶԱՐԻՆ: ԹՎ. ՌՃԾ: (1701):

1370. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև անցքից շարժված, գտնվում է դերեզմանատան արևմտյան մասում. Հյուսիսային կողին 3 խորան՝ մեջինը խաչ, շրջանակներին 3 տող.



ՄԷ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՃԱՆԻՊԷԿԻՆ, ՈՐԴԻ
ՊԱՐՈՆ ԱԼԱԽԱՆԻՆ:

Մանր. XVI—XVII դարերի:

ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋԸ

1371. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու արևմտյան պատի հարավային անկյունի մեջ. կողքի երկու շրջանակներին և ներքևի գնդի շուրջը՝ ուռուցիկ տառերով. 4 տող.

... ԵՂԲԱՐՔՍԱՍՏԻՍԵՂԻՇԱՅՔՀՍԿՈՍՏԱՆԴԱՂ. . .





ՄԵՔ[Ս]. ԵՂԲԱՐՔՍ, ԱՏԻՍ, ԵՂԻՇԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ, ԿՈՍՏԱՆԴ, ԱՂ[Ա]ՅԲԷԿ],
ՈՐԴԻՔ ՓԻՐՀԱ[Մ]ՋԻՆ ԿԱՆԿ[Ն]ԵՑԱՔ ԽԱՉԵՐ[Ս] Բ[Ա]ՐԵԽԱԻՍ ԾՆՈՂԱՑ
ՄԵՐ:] ԹՎ. ՋՁԸ: (1539):

Հրատ. Սմբատյանց, 603։ Լալայան, XIX, 22։



22–916

1372. ՏԱՊԱՆԱՔԱՐ, դրված է եկեղեցու արևմտյան մուտքին որպես կողաքար. երեսից երեսը ծածկված է քառակուսիներով և զարդերով, տակի մասում ուռուցիկ տառերով 1 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՓԻՐՀԱՄԶԱՅԱՂԻՆՈՐԻ ◠ . . .

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՓԻՐՀԱՄԶԱՅ ԱՂԻՆ . . . . .

Ծանոթ. Ծածկված է նախորդի հետ, հավանաբար և նույն վարպետի ձեռքով

1373. ՏԱՊԱՆԱՔԱՐ, դրված եկեղեցու արևմտյան մուտքի գլխին, բարավորի փոխարեն. երեսին չորս խորաններ ու խաչեր, շրջանակներին 3 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐԴԱՏԻՆ,| ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՄԻՐԶԱՅՃԱՆԻՆ, ԵՂԲԱՅՐ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՊԷԿԻՆ. ՓՈԽԵՑԱՒ Է ՔՍ. ՆՈՐԻՆ ՋՂ: (1541) ԹՎԻՆ: ԱԿՈՒ ԿԱՅՁՄՈՅԴ:

1374. ԽԱՉՔԱՐ, դեղնավուն քարից, կանգնած է եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունի մոտ. Թիկունքին 10 տող.

ԿՄԱՅ
ԵՍԻՇԽԱՆՍՈ
ՐԴԻԻՄ
ՍԳՄՍԿԱՅ
ԿՆԵՑԻՔՍՈՒԲ
ԽՆՍՀՖՈՅՀՐԱՅ
ՄՐՄՏՐՍԳԻՆՄՈՐՄՐ
ԴԷՎԼԱԹԻՆԵՂԲ
ԱՐՑՔՎԵՐԱՑ
ՈՐԴՈՑԴՍՏԵՐՑ

ԿԱՄԱՒՆ ԱՅ| ԵՍ ԻՇԽԱՆՍ, Ո|ՐԴԻ ԻՄ| ՍԱՐԳԻՍ, ԿԱՆ|ԿՆԵՑԻՆՔ Ս|ՈՒՐԲ|ԽԱՉՍ ՀՈԳՈՅ ՀԱՒՐ| ՄԵՐ ՏԷՐ ՍԱՐԳՍԻՆ, ՄՈՐ ՄԵՐ| ԳԷՎԼԱԹԻՆ, ԵՂԲ|ԱՐՑ, ՔՎԵՐԱՑ,| ՈՐԴՈՑ, ԴՍՏԵՐՑ:

Ծանոթ. Հավանաբար XVI դարի:

*1375. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդի մոտ. Թիկունքին 5 տող.*

ՄԻՆՉՍԲՄԷԽԻՍՄԷՐ
ԷԱԿՈԲԻՆՈՐԴԻՎԱՆ
ՈՒՄԻՆԿՈՂԱԿՑԽՈՍՐՈ
ՎԻՆՈՐԴԻՊԱՅԻՆՏՈ
ԻՐԻՆ.

ԱՌ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՏԷՐ| ՀԱԿՈԲԻՆ, ՈՐԴԻ ՎԱՆ|ՈՒՍԻՆ, ԿՈՉԱԿԻՑ ԽՈՍՐՈ|ՎԻՆ՝ ՈՐԴԻ ՊԱՅԻՆՏՈ|ԻՐԻՆ։

Ծանոթ. *Խոսրով կոչացի անվան հանդիպում ենք այդ դարերում։ Նույնպես XVI դարի։*

ՍԵԼԻՄ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

*1376. ԽԱՉՔԱՐ, բարձր, զեղաքանդակ, պատվանդանի վրա, ճակատին 5 խորշ, որոնց մեջ մելիքի և որդիների պատկերներ են՝ կանգնած վիճակում. յուրաքանչյուրի գլխի մոտ համապատասխան անունով. երեսի բոլոր տառերը ուռուցիկ են։ Թիկունքը ևս լավ մշակված է, կենտրոնում խաչ և շուրջը արձանագրություն. ԵՐԵՍԻՆ՝*







ԱՌ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔ ՊԵԿԻՆ,| ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ԱԾԱՊՈՎԻՆ, ԹՈՌ ՊԱՐՈՆ ՔԱՄԱԼ ՊԷՅԿԻՆ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՊԷՅԿ։ ԱԾԱԾԻՆ ՅՍ. ՔՍ։ ՈՀԱՆԷՍ։ ԳԱԲՐԻԷԼ։

*ԹԻԿՈՒՆՔԻՆ՝ 9 տող.*

ԹՎԻՆ ։ՌԾԻԷ։ (1678)| ԿԱՄԱՒՆ Ա.Յ. ՄԵՔ ։Ե։ (5) ԵՂԲ|ԱՐՔՍ ԵՍ՝ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀ|ՆԱԶԱՐՍ, ՄԱՑԻՆ ՊԵԿՍ, ՏԱԹԻ|ՈՒ ՊԵԿՍ, ՄԻՐԶԱՑ ՊԵԿՍ, ՄԵԼՔ|ՈՒՄ ՊԵԿՍ, ՄԱՅՐ ՄԵՐ ԽԱՆՈՒՄԱՂԷՍ՝| ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ| ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔ-ՊԷՅԿԻՆ։

Ծանոթ. *Բոլոր հրատարակիչները՝ սկսած Ջալալյանից, խաչքարի երեսի արձանագրությունը աչքաթող են արել, բայց այն շատ կարևոր է տոհմի ճյուղագրության համար։ Մյուս կողմից՝ թիկունքի արձանագրության սկզբի թվականը՝ ։ՌԾԻԷ։ ուղղել են ։ՌԻԷ։ (1578), որը ճիշտ է։ Ավելորդ հարյուրավորը պետք է համարել փորագրողի սխալմունքը։*

Հրատ. Ջալալյանց. Բ, 111։ Ալիշան, 72։ Ամրատյանց, 610։
Լալայան, XIX, 22։

***1377. ԽԱՉՔԱՐ**, մեծ, գեղաքանդակ, այստեղ մնացածներից ամենամեծը, քիվին, խաչի տակը և գոտի մաս.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԱՊԱՅԻ ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ԷՄՍԱՑ| ՊԷԿԻՆ, ԹՈՌՆ ՄԷԼԻՔ ՇԱՑՆԱԶԱՐԻՆ. ՈՎ ԿԱՐԴԱ....:| ՆՎԱՍՏ, ՍՈՒ-ՏԱՆ| Ն ԶՈՐՀԱՊ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՊԷԿԻՆ| ԹՎ. :ՌՂ: (1641) էր:

*Ծանոթ. ԱՊԱՁ անձնանվան վերջին Ձ տառի վերին մասը ջարդված է, և, որովհետև փոքրատառ է գրված, այդ պատճառով էլ ներքևի մասը նույնն է դ և չ տառերի հետ։ Մենք ԱՊԱՁ ենք վերծանում, նկատի ունենալով այդ անվան գործածությունը Շահնազարյանների տոհմի մեջ, որը հայտնի է այլ աղբյուրներից։*

***1378. ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, կանգնած է պատվանդանի վրա. ճակատին հինգ խորանների մեջ սրբապատկերներ, քիվին, ճակատին և խաչի թևերի արանքներում գրված են ուռուցիկ տառերով։ Թիկունքը ես մշակված է, կենտրոնում խաչ և շուրջը փորագրված.*

***ԻՐԵՍԻՆ՝** 8 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՊԱՐՈՆ ԵԱՒՐԻ ՊԷԿԻՆ.| ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ԳՈՒԼԱՍԱ-ՐԻՆ, ՈՐ Է| ՈՐԴԻ ՊԱՐՈՆ| ԴԱՐԱՑ| ԳԱԶ| ՊԷԿԻՆ:|ԹՒՆ| :ՌՃԵ: (1656):

***ԹԻԿՈՒՆՔԻՆ՝** 7 տող.*



ԿԱՄՈՎՆ ԱՅԻ ԵՍ ԳԻՎԱՆ| ԲԷԿՍ, ՏԷՐ ՎԱՐԴԱՆ, ՊԱՐՈՆ ՊԱՊՍ, ԿԱՆԿՆԵՑԱՔ| ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ| ԾՆՈՂԱՑ ՄԵՐ ԵԱՒ|ՐԻ ՊԷԿԻՆ, ԳՈՒԼԱՍԱՐԻՆ:

**1379. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց. երեսի չորս շրջանակների վրա 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆԱՑ ՊԱՐՈՆ ԵԱՎՐԻ| ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ| ՄԷԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ, ԱՆՈՂՈՐՄ ՄԱՀՈՒԱՄԲ ՓՈԽԵՑ|ԱՒ ԱՌ Ք̅Ս̅. ԵՒ ԵԹ|ՈՂ ԴԱՌՆ ՍՈՒԳ:

*Հրատ. Ջալալյանց, Բ, 111, Ալիշան, 72, Սմբատյանց, 610, Լալայան, XIX, 23;*

ԳՅՈՒՂԱՄԻՋՈՒՄ ՑՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

**1380. ԽԱՉՔԱՐ,** *կեսից շեղակի կոտրած, գրված է Գասպարյան տան պատի մեջ, երևում է միայն թիկունքը՝ պակասավոր արձանագրությամբ, 9 տող.*



. . . |ՊԱՊՈՒ . . . | ՇԱՀՆԱԶԱՐ....| . . . ՊԷԿՍ, ԱԹԱՅ|ՊԷԿՍ, ՄԱՅ|ՑՐՆ ՍԵՐ ԽԱԹՈՒՆ| ԿԱՆԿՆԵՑԱՔ Ս̅Բ̅. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՀՕՐՆ ՄԵՐ|ՈՅ ՄԻՐԶԱՅԻՆ. ԻՇԵՑ|ԷՔ Ի Ք̅Ս̅:

Ծանոթ. *Անձնանունները, խաչքարի ընդհանուր ձևը և գրչության արվեստը շատ նման են Շահնազարյանների հուշարձաններին։*

**1381. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *մեծ, օրորոցաձև, գրված է բակի պատի մեջ, գյուղի արևմտյան եզրին. երևում է մի երեսը, այն էլ խիստ ջարդոտված. 3 տող.*



. . . ԵՍ ԳԱԼՈՒՍՏՍ . . . |ՋՏՈՒԱԾՍ ՈՐ Ի ԿԱՆԿՆԵԼ . . . | Ի Թ̅Վ̅. ՋԴ: (1455):

**1382. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, գտնված է Սարգսյան Թադուհու բակում*[1]. *մի երեսին սազ նվագող, երկու պարողներ, չորրորդը գավը ձեռքին, առաջիններին սեղան՝ վրան լիքը պնակներ, կուժեր ու հացեր: Դրանց գլուխներին արանքում ուռուցիկ տառերով միայն թվականը. մյուս երեսին երեք խորան՝ մեջինին խաչ և շրջանակներին 3 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՊԱՊԱՄԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔԵԱՆԵԹԻՆ ԹՈՌՆ ԱՏԻՃԱՆԻՆ: ԹՎ. :ՌՃԿ: (1711):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

**1383. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որը կանգնած է եղել եկեղեցու մոտ.*

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս մեծ իշխանն Մելիք Բեգին, հաւատացի հանգուցեալ Հախնազարին, յամի ծննդեանն Շահթահմազին: Սա փոխեցաւ առ Քս. արհիեպիսկոպոս տէր Մելիքսէթին ձեռամբ:

*Հրատ. Ջալալյանց, Բ, 111։ Ալիշան, 72։ Սմբատյանց, 608։ Լալայան, XIX, 22։*

**1384. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որը կանգնած է եղել Մելիք Շահնազարյանների գերեզմանոցում.*

Այս է հանգիստ պարոն Մելիք Շահնազարին, որ էր սա տէր և իշխան երկրիս Գեղամայ: Մեծասուն և աստուածասէր իշխան էր սա. Բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քս. բարեպաշտութեամբ Շահաբասին. թվին :ՌԾԷ: (1608)[2]:

*Հրատ. Ջալալյանց, Բ, 111։ Ալիշան, 72։ Սմբատյանց, 610։ Լալայան, XIX, 22։*

**1385. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա, որը գտնվելիս է եղել Մելիք Շահնազարյանների գերեզմանոցում.*

Այս է հանգիստ մելիք Քամալպեկին, որդի մելիք Շահնազարին. թվ. :ՌՀ: (1621):

*Հրատ. Լալայան, XIX, 23։*

**1386. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա, որը գտնվում էր նախորդի մոտ.*

Այս է հանգիստ Գուլասարին, կողակից Սարի պէկին, հարս մելիք Շահնազարին. :ՌՀ: (1621) թվին:

*Հրատ. Լալայան, XIX, 23։ Հանգուցյալի անունը գրել է Գեչիխան, որը սխալ է։ Սարի բեգի ամուսնու անունը երկու անգամ գրված է մեր նախորդ արձանագրությունների մեջ՝ ԳՈՒԼԱՍԱՐ։*

---

[1] *Այստեղ է գտնվում նաև մի փոքր, բայց բարձր արվեստով շինված տապանաքար, որի վրա կա միայն թվականը՝ ՌԻԶ։ (1577)։*

[2] *Դեռևս Լալայանի օրոք (1910) այս խաչքարն արդեն անհայտացել էր, տե՛ս «Ազգ. հանդ.», XIX, 22։*

**1387.** *ԽԱՉՔԱՐԻ վրա, որն ագուցված է եղել Կիտավեր եկեղեցու հարավային պատի մեջ, ներքուստ.*

Կամաւն Այ. ես Միրզանան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Տէրունին հա-նանային, որ էր սա տէր տանս Գեղամայ:

*Հրատ. Սմբատյանց, 608; Լալայան, XIX, 22։*

**1388.** *ԽԱՉՔԱՐԻ վրա, որն ընկած է եղել հին գերեզմանատան մեջ.*

Ես Ամիրղասս կանգնեցի տապանս հաւր իմոյ Գորգայ, մաւր իմոյ Մամքանին՝ ով կարդէք յաղաւթս յիշեցէք:

*Հրատ. Լալայան, XIX, 21։*

## ՓՈՔՐ ՄԱԶՐԱ

*Գյուղի հին անունը հայտնի չէ. աշխարհագրական գրականության մեջ հին հուշարձաններ չեն արձանագրված, բայց մեր հավաքածուում տեղ գտած այս չորս արձանագրությունը գյուղի հնությունը հասցնում են մինչև XIII դարը, իսկ նրա չեն լինելը մինչև XVI—XVII դարերը (այժմ էլ չեն է)։ Այս հանգամանքը, որ պահպանված հուշարձանները ցրված են, առանձնակի և առաճարն էլ մի փոքր մատուռ է նման, թերևս նշան են հին գյուղի փոքր լինելուն։*

**1389.** *ԽԱՉՔԱՐ, մեծ, զեղաքանդակ, կանգնած է եղել մեծ ժայռաբեկորի վրա՝ Ամիր Ալավերդի բակում, այժմ ընկած է և վերևի ձախ մասը կոտրատված, ճակատին և խարսխի շուրջը 5 տող.*



Ի ՉԺԸ: (1269) ԹՎ. ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍԲ. ՆՇԱՆՍ| Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԹԱԳՈՐԿԱՆԱ, ՁԵՌ|ԱՄԲ[1] ..... ՄԿՆՈՅ ԵՒ ՀԱՅ|ՐԷ... Ի ՅԻՇԵՑԷՔ| Ի ՔՍ:

Ծանոթ. *Թվականի առաջնատառը կարելի է և Ծ կարդալ։*

**1390.** *ԽԱՉՔԱՐ, մեծ, զեղաքանդակ, կանգնած է պատվանդանի վրա, գյուղի արևմտյան եզրին, արտերի մեջ, ժայռաբեկորի վրա. ճակատին և թևերի շուրջը 5 տող.*



ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ. ԱՊԱՂԱ [Ի]ՂԱ-ՆԻՆ[Ի] |ԵՍ ՍՈՒՍԲԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ|ՈՒԹԵ. ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՅԻ-ՇԵՑ|ԷՔ Ի ՔՍ. ԱՂԱՉԵԼՄ :| ԹՎ. ՉԾԷ: (1308):